«ՎԻՔԻԱԿՈՒՄԲ» ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

Շաբաթական՝ 1 ժամ, տարեկան՝ 34 ժամ

2023-2024 ուսումնական տարի

Կազմող՝ Կոտայքի մարզի Ջրվեժի միջնակարգ դպրոցի պատմության և հասարակագիտության ուսուցիչ Կարախանյան Գայանե

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

«Վիքիակումբ» խմբակը արտադասարանական գործունեության ամենակարևոր տեսակներից մեկն է: «Վիքիակումբ» խմբակի օգնությամբ աշակերտները սովորում են աշխատել հայերեն Վիքիպեդիայում և մյուս քույր նախագծերում: Աշակերտները սովորում են խմբագրման հիմնական կանոնները, տեղեկանում նոր գործիքների մասին, իսկ խմբակի ղեկավարը հետևում է նրանց ստեղծած հոդվածներին:

«Վիքիակումբ» խմբակի հիմնական նպատակն է դպրոցականներին մասնակից դարձնել Վիքիպեդիա ազատ հանրագիտարանի խմբագրմանը, պայմաններ ստեղծել նրանց ազատ ժամանակն օգտակար և արդյունավետ դարձնելու համար: «Վիքիակումբ» խմբակի մասնակիցները ոչ միայն զարգացնում են հայերեն Վիքիպեդիան, այլև ինքնակրթվում են, սովորում են նյութը համապարփակ ուսումնասիրել, տարբեր աղբյուրներ օգտագործել, զարգացնել քննադատական մտածողությունն ու մեդիագրագիտությունը:

«Վիքիակումբ» խմբակի գործունեության շրջանակներում զարգանում են նաև սովորողների՝ մեկը մյուսին օժանդակելու, համագործակցելու, իրարից սովորելու կարողությունները և պատասխանատվության զգացումը, որոնք շատ կարևորվում են նոր ՀՊՉ-ում:

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- Ներկայացնել աշակերտներին ամենահաճախ այցելվող տեղեկատվական կայքերից մեկի՝ Վիքիպեդիա, ազատ բովանդակությամբ, բազմալեզու հանրագիտարանի գործունեության սկզբունքներն ու նպատակները
- Ծանոթացնել հայերեն Վիքիպեդիայում խմբագրման հիմնական կանոններին և գործիքներին
- Ձևավորել և զարգացնել Վիքիպեդիայում խմբագրման հմտություններն ու կարողությունները
- Նպաստել հայերեն Վիքիպեդիայում բացակայող կարևոր հոդվածների ստեղծմանը
- Արժևորել գրագետ ու արժանահավատ մեդիա բովանդակության ստեղծումը

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Խմբակի անդամները կկարողանան՝

- ➢ գրական հայերենով ստեղծել տարբեր թեմաներով գրավոր խոսք՝ հոդվածներ հայերեն Վիքիպեդիայում (Մ1)
- ➢ անկողմնակալ և առանց նախապաշարմունքների վերաբերվել ենթադրություններին, կարծիքներին և արժեքներին, վերլուծել հասանելի տեղեկույթը (Մ24)
- ➢ ուսումնասիրել և ընդլայնել սեփական ուսումնառության և փորձառության հնարավորությունները՝ դրսևորելով շարունակական ինքնազարգացման վարքագիծ (Մ25)
- ➢ քննադատաբար վերլուծել տեղեկատվությունը, հասկանալ մեդիա ուղերձների ստեղծման գործընթացը (Մ27)
- ➢ ստեղծել մեդիա բովանդակություն և տարածել իր ասելիքը մեդիայի տարբեր հարթակներում՝ գիտակցելով դրա հետևանքներն ու ազդեցությունը, պահպանելով էթիկան և համացանցից օգտվելու անվտանգության կանոնները (Մ28)
- ➢ ուրիշների հետ համագործակցելով և ինքնուրույն ձեռք բերած գիտելիքը կամ գործնական արդյունքը ներկայացնել հայերեն Վիքիպեդիայում տարբեր հոդվածներ ստեղծելու միջոցներով (Մ29)
- ➢ իր առջև դնել նպատակներ, մշակել դրանց հասնելու ուղիներ և լինել հետևողական (Մ32)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խմբակի աշխատանքը արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ են համակարգիչներ և համացանց մուտք գործելու հնարավորություն: Խմբակի անդամների աշխատանքը իրականացվելու է https://hy.wikipedia.org/wiki/՝ հայերեն Վիքիպեդիայում, օգտագործվելու են նաև՝ https://en.wikipedia.org/wiki/Wikipedia և https://ru.wikipedia.org/wiki/ էջերը:

ԽՄԲԱԿԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ /տարեկան/

Հ/Հ	Բովանդակություն	Նպատակ	Ժամանակ	Նշումներ
1.	Ներածություն	Ներկայացնել աշակերտներին Վիքիպեդիա, ազատ բովանդակությամբ, բազմալեզու հանրագիտարանի գործունեության սկզբունքներն ու նպատակները	1-ին շաբաթ /1 ժամ/	
2.	Հայերեն Վիքիպեդիայի խմբագրման կանոններն ու գործիքները	Ծանոթացնել Վիքիպեդիայի խմբագրման կանոներին ու գործիքներին, ստեղծել մասնակցային հաշիվներ	2-րդ, 3-րդ շաբաթներ /2 ժամ/	
3.	Հայերեն Վիքիպեդիայում բացակայող կարևոր հոդվածներ	Ուսումնասիրել Հայերեն Վիքիպեդիայում բացակայող կարևոր հոդվածների ցանկը, ընտրել հոդվածներ խմբագրելու համար	4-րդ շաբաթ /1 ժամ/	
4.	Հոդվածների ստեղծում կամ բարելավում	Ստեղծել նոր կամ բարելավել արդեն գոյություն ունեցող հոդվածները հայերեն Վիքիպեդիայում	5-14-րդ շաբաթներ /10 ժամ/	
5.	Ամփոփում	Վերլուծել և ամփոփել առաջին կիսամյակում խմբակի կատարած աշխատանքները	15-րդ շաբաթ /1 ժամ/	
6.	Հոդվածների ստեղծում կամ բարելավում	Ստեղծել նոր կամ բարելավել արդեն գոյություն ունեցող հոդվածները հայերեն Վիքիպեդիայում	16-30-րդ շաբաթներ /15 ժամ/	

7.	Ամփոփում	Վերլուծել և ամփոփել երկրորդ կիսամյակում խմբակի կատարած աշխատանքները, ներկայացնել հաշվետվություն	31-32-րդ շաբաթներ /2 ժամ/	
8.	Պահուստային ժամեր	Այցելություն Վիքիպեդիայի գրասենյակ, հանդիպումներ փորձառու խմբագիրների հետ	33-34-րդ շաբաթներ /2 ժամ/	
9.	**Ընդամենը**		**34 ժամ**	